МАНУЧАРЯН С. Р.

ОРГАНИЗАЦИЯ РАБОТ ПО СНИЖЕНИЮ БЕДСТВИЙ И РИСКОВ В ДОШКОЛЬНЫХ УЧРЕЖДЕНИЯХ

В статье проанализированы основные направления работ по СБР в дошкольных учереждениях. Представлены виды педагогических воздействий в этом направлении, разные формы деятельности ребенка и применяемые интерактивные методы. В тоже время подчеркнута роль сотрудничества с родителями дошкольников.

MANUCHARYAN S. R.

THE ORGANIZATION OF THE WORK DIRECTED TO THE REDUCTION OF THE RISKS OF DISEASES IN PRESCHOOL ESTABLISHMENTS

The article analyzes the main directions of work on the reduction of risks and disasters in preschool institutions. It is presented kinds of prdagogical impacts in this direction, various forms of child's activity and used interactive methods. At the same time, it is emphasized the role of cooperation with parents of preschool children.

ՄԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՐԻՆԵ ԿԱՌԼԵՆԻ
Խաչատուր Աբովյանի անվ. հայկական պետական մանկավարժական համալսարան
Հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոն, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՏԵՍՈՂՈՒԹՅԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐ

Կրթության ոլորտում և հասարակական կյանքում վերջին տարիներին տեղի ունեցող բարեփոխումները դրական ազդեցություն են ունենում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց սոցիալականացման, հասարակության մեջ ներառման և կյանքում իրենց ուրույն տեղը գտնելու գործընթացներում:

Հայտնի է, որ տարեց տարի աճում է տեսողության խանգարում ունեցող անձանց թիվը, և նրանց մասնագիտական կողմնորոշման հիմնախնդիրը մնում է արդիական [8, 24-36]: Ստեղծված իրավիճակում մենք

կանգնում ենք մի շարք հիմնահարցերի առջև. ինչպե՞ս են տեսողության խանգարում ունեցողները կողմնորոշվում մասնագիտություն ընտրելիս, հասանելի՞ են արդյոք նրանց բոլոր մասնագիտությունները և այլն [1, 260-269]: Այս և մի շարք այլ հարցերի լուծման նպատակով փորձել ենք վերլուծել տեսողության խանգարումները, այն հիմնական մոտեցումները, որոնք անհրաժեշտ են նրանց մասնագիտական կրթություն ստանալու համար:

Մասնագիտական կրթության բովանդակության մեջ է մտնում դպրոցականի աշխատանքային դաստիարակությունը, ծանոթացումը ապագա մասնագիտությանը, բարձրագույն կամ միջին մասնագիտական հաստատություններում մասնագիտական կրթություն ստանալը՝ հաշվի առնելով տեսողության խանգարում ունեցող անձի հոգեֆիզիոլոգիական, անհատական առանձնահատկությունները [6, 24-87]:

Անվիճելի է այն, որ ներկայիս աշխատաշուկայում մրցակցությանը դիմակայելու և աշխատանք գտնելու համար տեսողության խանգարում ունեցող անձը պետք է ունենա բարձր մասնագիտական պատրաստվածություն:

Մասնագիտական կողմնորոշման խնդիրների լուծումը արդյունավետ կլինի, եթե իրականացվի հետևյալ ուղղություններով.

- մասնագիտությունների լուսաբանում,
- մասնագիտության ընտրության խորհրդատվություն,
- մասնագիտական հարմարեցում:

Այս աշխատանքների հիմքը դրվում է դպրոցում, սակայն տեսողության խանգարում ունեցող երեխաների տարբեր հնարավորությունների մասին տեղեկատվական բավարար աշխատանքներ չի իրականացնում [5]: Ինչն էլ հաճախ հանգեցնում է սխալ մասնագիտության ընտրության:

Մասնագիտական կողմնորոշման հաջորդ քայլը միջին մասնագիտական կամ բարձրագույն ուսումնական հաստատությունում նրանց կողմից ընտրված մասնագիտության ձեռք բերումն է՝ պետական չափորոշիչներին, բոլոր ուսանողների համար ընդունված ուսուցման պլանին և ծրագրին համապատասխան: Սակայն տեսողության խանգարում ունեցող ուսանողները, հայտնվելով բարձրագույն ուսումնական հաստատություններում, կանգնում են մի շարք խնդիրների առջև, որոնք դժվարեցնում են մասնագիտական կրթական ծրագրի տիրապետումը: Օրինակ՝ ուսուցման նոր տեխնոլոգիաների մշակման և ներդրման հարցերը (օգտագործել գծանիշեր, կիրառել շարժական կամ սեղանին ամրացված խոշորացնող միջոցներ, սարքավորումներ, տեքստը խոսքի փոխարկող համակարգչայի ծրագիր, տեղանքում կողմնորոշվելուն նպաստող ձայնային GPS սարքի կիրառում և այլն) [9], [2]:

Տեսողության խանգարում ունեցող անձանց հատուկ խնդիրների բազմության մեջ էական է հատուկ գրականության հասանելիության խնդիրը: Հայտնի է, որ չտեսնող ուսանողների մեծ մասը ուշ կուրացածներ են և չեն տիրապետում Բրայլյան գրին: Հատուկ գրականության վերլուծությունը ցույց

է տալիս, որ Բրայլյան համակարգին տիրապետում են չտեսնող ուսանողների 5-7 %-ը [4]: Պետք է ուշադրությունը կենտրոնացնել ուսումնական և տեղեկատվական բնույթի հատուկ գրականության վրա (աուդիո գրքեր), որի հիմնական նշանակությունը որպես անհրաժեշտ տեղեկատվության հասանելի աղբյուր ծառայելն է: Առայժմ լիովին մշակված չեն նաև աշխատանքային շուկայում տվյալ քաղաքացիների համար աշխատանքային տեղերի ստեղծման և պահպանման ոլորտում գործողությունների կոորդինացիայի միջգերատեսչական հարաբերությունները, ինչպես նաև անխոչընդոտ ճարտարագիտական և տեղեկատվական միջավայրի ապահովման հիմնախնդիրը:

Տեսողության խանգարում ունեցող ուսանողի հոգեբանամանկավարժական վերականգման արդյունավետ ընթացքը պայմանավորված է բարձրագույն ուսումնական հաստատության դասախոսական կազմի՝ այնպիսի խնդիրների իմացությամբ, ինչպիսիք են.

- ծագած խնդիրների դեպքում միմյանց աջակցության հմտությունները,
- անհրաժեշտ օգնության, շփման ոլորտի ընդարձակման, տեղեկատվության ձեռքբերման մատչելի հմտությունները,
- տեսողության խանգարում ունեցող ուսանողներին՝ ինչպես ուսումնական, այնպես էլ իր և այլ ուսանողների՝ ԲՈՒՀ-ի մասին տեղեկատվության ձեռքբերման և օգտագործման հմտությունների ձևավորում:

Անհրաժեշտ է կազմակերպել ներառական կրթության համակարգում աշխատողների պատրաստման և վերապատրաստման, դասախոսների որակավորման բարձրացման դասընթաց աշխատանքներ: Տեսողության խնդիր ունեցող երեխաների համար բարենպաստ պայմանների ստեղծումը բազմապլան և համակցված աշխատանքի արդյունք է:

Այսպիսով, վերականգնողական օգնությունն առաջարկում է անձի կողմից իր և խնդրի գիտակցում, սոցիալական ակտիվ դերի համար նախադրյալների ձևավորում, համարժեք ինքնագնահատում, սոցիալական խնդիրների արագ և ստեղծագործական լուծում:

Այսպիսով, տեսողության խանգարում ունեցող անձանց մասնագիտական կողմնորոշման հիմնախնդիրը ունի հիմնովին վերանայելու և ամուր հիմքի վրա դնելու կարիք.

1. Առաջնահերթ է աշխատանքային շուկայում չտեսնողների համար առավել մատչելի մասնագիտությունների մասին տեղեկատվության և մասնագիտական կողմնորոշման վերաբերյալ միջոցառումների կազմակերպում:
2. Հաշմանդամների բարձրագույն կրթության համակարգի զարգացման նպատակով անհրաժեշտ է վերականգնողական և ուսումնական գործընթացների կազմակերպման համընդհանուր չափանիշների, նյութատեխնիկական, հոգեբանամանկավարժական, սոցիալական, կադրային և վերականգնողական մեխանիզմների մշակում:

3. Օրախնդիր է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ աշխատանքներ կազմակերպելու ուղղությամբ բուհերում պրոֆեսորադասախոսական անձնակազմի վերապատրաստման դասընթացների կազմակերպումը:
4. Անհետաձգելի է չտեսնող և թույլ տեսնող ուսանողների արդյունավետ մասնագիտական կրթության համար հոգեբանամանկավարժական աջակցության կենտրոնի ստեղծումը, որը թույլ կտա նրանց հաղթահարելու սոցիալականացման, կրթական դժվարությունները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մարության Մ.Կ., Տեսողության խանգարումներ ունեցող ուսանողների հիմնախնդիրները բարձրագույն կրթության համակարգում, «Բանբեր 2», Երևանի Վ.Բրուսավի անվ պետական մանկավարժական համալսարան ,,Լինգվա ,, հրատարակչություն, Երևան, 2014, էջ 260-269:
2. Մարության Մ.Կ, Ասատրյան Ս.Ա., Տիֆլոտեխնիկայի կիրառման հիմնախնդիրը ներառական կրթության համակարգում, »Հատուկ կրթության հիմախնդիրներ « գիտամեթոդական հանդես, N3, Երևան, 2015, էջ 68-73:
3. Մարության Մ.Կ, Ասատրյան Ս.Ա. Ներառական կրթության հիմնախնդիրը ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունում, « Ներառական կրթություն. ժամանակակից խնդիրներն ու մարտահրավերները» միջազգային գիտագործնական գիտաժողովի հոդվածների ժողովածու», Երևան, 2015, էջ 67-71
4. Денискина, В.З. Особые образовательные потребности, обусловленные нарушениями зрения и их вторичными последствиями / В. З. Денискина // Дефектология. — 2012. — № 5. — С. 56–64
5. Ермаков В.П. «Профессианальная ориентация учащихся с нарушениями зрения» М.,1986, 158 с.
6. Климов Е.А., Частяков С.Н. «Выбор профессии» М., 1988, 185с.
7. Малофеев, Н. Н. Единая концепция специального федерального государственного стандарта для детей с ограниченными возможностями здоровья: основные положения / Н. Н. Малофеев, О. С. Никольская, О. И. Кукушкина, Е. Л. Гончарова //Альманах ИКП РАО. — 2010. — № 13.
8. Солнцева, Л.И. Психологические проблемы незрячего в трудных и экстремальных ситуациях / Л. И. Солнцева. — М. : Логос ВОС, 2005.
9. http://www.edu.am
10. http://www.inclusion.uwe.ac.uk

МАРУТЯН М. К.

ПУТИ СОВЕРШЕНСТВОВАНИЯ ПРОФЕССИОНАЛЬНОГО ОБРАЗОВАНИЯ ЛИЦ С НАРУШЕНИЯМИ ЗРЕНИЯ

В статье представлены проблемы профессионального образования лиц с нарушениями зрения. Затронуты основные задачи профессионального образования, пути совершенствования работ, направленных на решение проблем в данной сфере.

MARUTYAN M. K.

PERFECTION WAYS OF VOCATIONAL EDUCATION OF CHILDREN WITH VISUAL IMPAIRMENT

The article presents the problem of vocational education of persons with visual impairment. Touched upon the main tasks of vocational education, ways to improve the work aimed at solving the problems in this sphere.

ՊՈՂՈՍՅԱՆ ԴԱՎԻԹ ԱԼԲԵՐՏԻ
Խաչատուր Աբովյանի անվ. հայկական պետական մանկավարժական համալսարան Թանգարանագիտության, գրադարանագիտության և մատենագիտության ամբիոն, մանկավարժական գիտությունների թեկնածու

ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱՂԱԴՐԻՉ

Հետխորհրդային տարիների բարձրագույն կրթության իրականացման հիմնախնդիրներից է աշխատաշուկայի պահանջներին համապատասխան և մրցունակ մասնագետների պատրաստումը, ովքեր կկարողանան առանց դժվարության աշխատանք գտնել իրենց մասնագիտությամբ: Մի հիմնախնդիր, որն այսօր էլ քննարկման կարիք ունի, քանի որ հաճախ բարձրագույն կրթությամբ նորավարտ մասնագետներից գործատուն աշխատանքային փորձ է պահանջում, և մրցունակության հարցը պայմանավորվում նրա՝ գործնական ոլորտում փորձառություն ունենալու հետ: Նման փորձառության խնդիրը համալսարանում ուսումնառության տարիներին հիմնականում լուծվում է ուսումնական ծրագրերով նախատեսված պրակտիկաների անցկացմամբ: Դրանք կարևոր նշանակություն ունեն, քանի որ ուղղված են ապագա մասնագետի՝ գործնական ոլորտի հետ ծանոթացմանը, հետազոտման ու ոլորտում աշխատող մասնագետների հետ անմիջական շփմանը, ինչ-որ կերպ ստացված գիտելիքների փորձարկմանը: Սակայն ուսումնական պրակտիկաները, անկեղծ պետք է լինենք, հաճախ չեն լուծում աշխատանքային փորձ ունենալու խնդիրը: Վերջինս ենթադրում է անմիջական և շարունակական ներգրավվածություն որոշակի հաստատության տարբեր օղակներում գործառույթների իրականացման, ապա նաև՝ նման փորձառությունը վկայող փաստաթուղթ:

Առկա հիմնախնդիրը նպատակ ունենք առավել որոշակի դիտարկել սեփական փորձով, որն առնչվում է Խ. Աբովյանի ՀՊՄՀ-ի «Թանգարանային գործ և հուշարձանների պահպանություն» մասնագիտությանը: Որ-